ԻՆՉՊԵ՞Ս ՀԱՇՏՎԵԼ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հաշտեցման բուժիչ ուժը

Մաս 1

«Արդարության պտուղը խաղաղությամբ սերմանվում է նրանց համար, ովքեր խաղաղություն են անում:» Հակոբոս 3:18

Հակամարտության պատճառը: **Եսասիրություն**

«Որտեղի՞ց ձեր մեջ պատերազմներ ու որտեղի՞ց կռիվներ. չէ՞ որ այստեղից են՝ ձեր ցանկություններից, որոնք կռիվ են տալիս ձեր անդամների մեջ: Ցանկանում եք, բայց չունեք, սպանում եք, նախանձում եք, բայց չեք կարողանում ձեռք բերել, պատերազմում եք և կռվում եք, բայց չունեք, որովհետև չեք խնդրում:» Հակոբոս 4:1-2

«Որովհետև ըստ մարմնի խոկումը Աստծու դեմ թշնամություն է, քանի որ Աստծու օրենքին չի հնազանդվում և չի էլ կարող:» Հռովմայեցիս 8:7

Բուժումը: Հաշտեցում

1. Հաշտություն կնքիր Աստծո հետ

«Եվ ձեզ էլ, որ մի ժամանակ օտարացած էիք ու թշնամի ձեր մտադրությունը ցույց տվող չար գործերով, հիմա որպես մարդ իր մարմնով մեռնելով՝ հաշտեցրեց, որպեսզի ձեզ սուրբ, անբիծ ու անմեղադրելի ներկայացնի նրա առաջ.» Կողոսացիս 1:21-22

«Եվ այն ամենից, որ Մովսեսի օրենքով չկարողացաք արդարանալ, նրանով ամեն հավատացող կարդարանա:» Գ Առաքելոց 13:38-39

2.Աստծուց օգնություն խնդրեք խզված հարաբերությունների համար

«Եթե ձեզանից մեկն իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուն, որ բոլորին առանց նախատելու պարզապես տալիս է, և նրան կտրվի:» Հակոբոս 1:5

3. Խաղաղության հանդիպում հրավիրել

«Եթե սեղանի վրա քո ընծան մատուցելիս լինես ու այնտեղ հիշես, որ եղբայրդ քո դեմ որևէ բան ունի, թո՛ղ քո ընծան այնտեղ՝ սեղանի առաջ, և գնա՛, նախ եղբորդ հետ հաշտվի՛ր, ապա արի՛, քո ընծան մատուցի՛ր:» Մատթեոս 5:23-24

4. Ես սկսում եմ հակամարտության իմ մասը խոստովանելով

«Ինչո՞ւ եղբորդ աչքի միջի շյուղը տեսնում ես, իսկ քո աչքի միջի գերանը չես նկատում: Կեղծավո՛ր, նախ քո աչքից գերա՛նը հանիր և այդ ժամանակ կտեսնես թե ինչպե՛ս եղբորդ աչքից շյուղը հանես:» Մատ 7:3,5

5. Լսիր նրանց ցավը

«Թող ամեն մարդ արագաշարժ լինի լսելու մեջ, ծանրաշարժ՝ խոսելու եվ բարկանալու մեջ.» Հակոբոս 1:19

«Մեզանից ամեն մեկը թող ընկերոջը հաճելի լինի բարին գործելու մեջ՝ նրան ամրապնդելու համար:» Հռովմայեցիս 15:2

6.Պատրաստ եղիր կլանելու այդ ցավը

«Որովհետև երբ մենք դեռ տկար էինք, Քրիստոսը որոշված ժամանակին մեռավ ամբարիշտների համար:» Հռովմայեցիս 5:6

«Որովհետև եթե այն ժամանակ, երբ թշնամի էինք Աստծուն, նրա հետ հաշտվեցինք իր Որդու մահով, ապա որքա՛ն առավել կփրկվենք նրա կյանքով, երբ հաշտվել ենք:» Հռովմայեցիս 5:10

7.Ընդգծիր հաշտեցումը ոչ թե լուծումը

Հաշտեցում =Վերահաստատել հարաբերությունները:

Լուծում= լուծել ամեն հարց:

Աստծո նպատակը իր եկեղեցու համար

«Ամեն ինչ Աստծուց է, որը մեզ Հիսուս Քրիստոսի միջոցով իր հետ հաշտեցրեց ու մեզ հաշտության ծառայությունը տվեց: Որովհետև Աստված էր, որ Քրիստոսով աշխարհն իր հետ հաշտեցրեց և նրանց հանցանքներն իրենց ներեց և հաշտության խոսքը մեր մեջ դրեց: Արդ Քրիստոսի անունով ենք պատգամաբերություն անում...հանուն Քրիստոսի աղաչում ենք, հաշտվե՛ք Աստծու հետ:» 2 Կորնթացիս 5:18-20

«Երանի՜ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծու որդիներ կկոչվեն:» Մատթեոս 5:9

Ում հետ ես պետք է հաշտվեմ:

Հաջորդ Քարոզի Թեման: Հովիվ Սարո Խաչիկեան

ՍՈՎՈՐԵԼ ԱՋԱՏՎԵԼ ՎԻՐԱՎՈՐԱՆՔԻՑ